զհամբոյր բերանոյս փափաքանաց ճոռոմական բանիւդ Վ. Հ. Գէորգ վարդապետի, որում սիրահար եմ յոյժ յոյժ։ Զախական նիզամից ոչ ինչ էր գրելոյ արժան, վասն այն զգրիչս ընդ ականջիդ իմացուԹեան խնայեցի. զի յանձնեցին Տէր Մարկոսին գրել առ որդին, առ ի ընդունել զնախկին վճիռն ձեր. ո՜հ եւ ո՜խ։ Տեղւոյս կացուԹիւնն որպէս Թողեր, այնպէս է անդանագան։ Աղաչեմ անդրէն՝ մի ումեք գրեսցես զկծանս, որ բազում բարեկամացդ է բան։ Զատուժանս անմեղ բամբասելոց հատուցանել եւ Պատրիարգ վարդապետն Տէր Յօհաննիսին, զի յամենեցունց զանխլին՝ յառաջուց ինքնին վճարեալ է, այժմ էառ 280 զշն. եւ բուրմունք տէրտէրին օրըստ օրէ յաճախէ՝ մինչեւ բարեկամացն եւս սկսան դարշիլ քիմք։ Սօֆճի մահտեսի Յօհաննէսի կինն բաժանեցաւ առանց հանդիսաւոր խայտառակուԹեան, զուստերս այրն, եւ զդստերս կինն առեալ։

— Իսկ եւ զայս ծանիր, զի ի հոկտմ. Իւէին ի սրայ գրեալ էր առ քարց սարկաւագ յօհաննէսն, եԹէ գժտուԹիւն ինչ անկեալ ի մէջ Եփրեմին եւ Հալէպու առաջնորդ Գաբրիէլ վարդապետին, զոր բազումս բազում կերպիւ տագնապեալ Եփրեմն, ապա ի գիշերի Թիւֆէկով սպանել տուեալ է զԳաբրիէլ Վ. Ն. գլուխդ ողջ լիցի։ Այլ եւ այսօր կրկին յանձնեաց մահտեսի Գասպար ամիրայն յատկապէս գրել առ տէրուԹիւնդ բազում ճարտարուԹեամբ խօսեցեալ, զոր ընկալցիս անբծուԹեամբ, եւ հատուսցես մտերմաբար։ Իգնիմիտու զառաջնորդուԹիւնն ճգեալ զմի մասն ետուն երկան Պօղոս Վ. Սանցւոյն, այսինքն զՄուհալըճն, զԲիրմաս, զՊալըքէսէր, եւ զարբանեակս սոցին, զուցէ կացցէ զամիսս 3, զոսցա մի բառ միջէս ունիս իմանալ մերձ ժամանակն ի Ս. Վ.էն կենդանի ձայնիւ։ Վերոյ Պետրոս Ամիրայի խնդրած Պետրոս առաքելոյ պատկերն ամենեւին անգանցանելի